

յորդորել, կարծես թէ կ'արդարացնէ Աստուրի: Այս կէտին պիտի անդրադառնանք յետոյ առանձին:

Աշխարհագրիս հետ կապ ունի նաև Հայոց քուականի սկզբնաւորութիւնը, որ ճշգրիտ 552, Յուլիս 11ին կ'իյնայ:

Ինչպէս տեսանք վերագոյն, հարկերու նոր օրէնքին հրատարակութիւնը տեղի ունեցած է 552ին, եւ ինչպէս բնական է մտածել՝ հաւանօրէն նոյն տարւոյն Փարսարդին (Նաւրուզ) ամսոյն, որուն սկիզբն է Յուլիս 6, երբ կը սօսուէր տարեգլուխ եւ թոսրովի դահակալութեան ԻԲ. տարեդարձը:

Որովհետև հարկահանութեան նոր օրէնքները կը սահմանէին, որ տարեկան հարկերը գանձուէին երեք ժամանակամիջոցներու մէջ՝ չորս ամիս մէկ անգամ, պարտաւոր էին դպիրները իւրաքանչիւր ժամանակամիջոցի մուտքերը եւ բաց մնացած հարկերը ճշգրիտ անցնել գիւմնին մտից մատենին մէջ եւ հսկել տարեկան կշիռին վրայ: Այս անտեսական պայմանները կը թելադրէին հարկաւ, որ երկրի մը մէջ, ուր չկար մինչեւ այն ժամանակ անտեսական տարի հաստատ քաղաքական թուականով, սկիզբ ըլլար նոր թուականի մը, հիմ առած հարկերու գանձման առաջին տարին (552 Յուլիս 6):

Այս անտեսական-հարկային տարւոյն ելակէտը պիտի բնորոշէր Հայաստանի մէջ 552, Յուլիս 11, երբ կ'իյնար հայկական տարւոյն տարեգլուխը՝ Նաւասարդ ամսոյն 1:

Կը կարծեմ թէ այս ենթադրութեամբս կը գտնէ Հայոց թուականը իւր սկզբնաւորութեան բնական եւ անտեսական պատճառը: Պատահական կամ կամայական չէ անշուշտ, երբ հին յիշատակագիրներէն ոմանք Հայոց թուականը «Պոսորովային թուական» կ'անուանեն. ոչ միայն վասն զի Պոսորով Ա. Անուշրուանի ԻԲ. տարւոյն գտաւ թուականութիւնը իր սկզբնաւորութիւնը, այլ եւ Պոսորով եղաւ իր հարկային օրէնքով անոր գրութեան պատճառը:

Հայ պատմագիրներն ու սօմարագիրները, որոնք առիթ ունեցած են խօսելու Հայոց թուականի գրութեան մասին, շատ շիտակաբար պայտուսին իսկական եղելութեան նկատմամբ եւ ժամանակը, երբ հաստատուած է թուականը, շատ հակաժամանակագրական ցուցմունքներով մատնանիչ կ'ընեն: Պատճառը, ինչպէս ինձ կ'երեւայ,

պէտք է փնտռել այն իրողութեան մէջ, որ անոնք այլ եւ այլ ազբիւրներէ քաղած են իրենց տեղեկութիւնները, եւ զանազան դէպքեր, այլազան ժամանակներու մէջ պատահած, համաձուլած են ի մի, առանց ուշադրութիւն դարձնելու ժամանակագրական կէտերու:

Կը զանազանեմ՝

ա. ազբիւրներ, որոնք կը խօսին անտեսական-քաղաքական թուականի սկզբնաւորութեան մասին.

բ. ազբիւրներ, որոնք նկատի ունին գատակական կանոնը եւ եկեղեցական տարին:

գ. ազբիւրներ, որոնք խօսք կ'ընեն եկեղեցական տարւոյ վերաքննութեան մասին:

1. Տնտեսական-քաղաքական թուականի սկիզբ առաւ 552, Յուլիս 11ին, Պոսորով Ա. ԻԲ.<sup>41</sup>, Յուստինիանոսի ԻԵ.<sup>42</sup> եւ Ներսէս Աշտարակեցոյ Դ.<sup>43</sup> տարւոյն, Ս. Յիզատիրոսի նահատակութենէ (9 Նոյ. 553) տարի մը յառաջ:

2. Եկեղեցական տարւոյ կամ Չատակական Կանոնի (532 ամեայ չրջանի) մասին խորհրդակցութիւններ եւ որոշումներ եղած են Հայոց թուականի Ժ.<sup>44</sup>, Յովհաննէս Գրեղինեցոյ<sup>45</sup> Զ., Պոսորովի ԼԱ.<sup>46</sup> տարւոյն (562), Վրթանէս Սիւնեաց եպիսկոպոսի եւ Միհր-Արտաշրի Սիւնեաց ախրջ օրով<sup>47</sup>:

3. Եկեղեցական տարւոյ մասին խնդիրներ յուղուած են — ինչպէս կ'երեւայ նաև Մովսէս կաթողիկոսի (572—604) Ժ. տարւոյն<sup>48</sup>:

Տեղւոյս չէ այս խնդրոյ շուրջը աւելի երկար յամել:

(Շարունակելի:)

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ



<sup>41</sup> Dulaurier, Recherches sur la chronologie arménienne, p. 105:

<sup>42</sup> Տօմար, առ Չամչեանի, Բ., 509:

<sup>43</sup> Ասողիկ, 82:

<sup>44</sup> Dulaurier, անդ, 58:

<sup>45</sup> Տօմար, առ Չամչ., Բ., 509:

<sup>46</sup> Յովհ. Դրասխանակերտցի, Վարդան եւն:

<sup>47</sup> Սա. Օրպէլեան:

<sup>48</sup> Յովհ. Դրասխանակերտցի եւ այլք:

ՎՐԵՍՏԵՆ ԵՒ ՀԱՅԵՐԸ

(Շարունակութիւն:)

Ա. ԳԼՈՒԽ

Հայաստանի հին բնիկները երկայնգլուխ եւ կարնգլուխ տիպեր: Սեպագիր յիշատակարանների գիւտն եւ ընթերցումը: Նայիրի, Ուրարտու, Վան եւ Խալդերը: Այժմեան Հայաստանի ամենից կարեւոր սեպագիր արձանագրութիւնը: Սեպագիրների լեզուն: Հայերէ՞ն թէ Վրացերէ՞ն: Հայ ժողովուրդի ծագումն եւ Արմենիա-Հայաստանի սկիզբը: Վանի սեպագիրների շրջանի եւ Խայ ազգային հին արձանագրութիւնների համեմատութիւնը: Խալդեան ժողովուրդի մնացորդներն եւ սերունդը: Եզրակացութիւն:

Մեր երկրի նախկին բնիկների ցեղի նկատմամբ թորհ. Հայաստանում կատարուած հնագիտական պեղումները շահեկան արդիւնք են տուած՝ Հրազդան գետի հովիտում, 6 մետր խորութեան մէջ գտնուած է ամենահին մի կմախք: Երեւանի համալսարանի ուսուցչապետ Աշխ. Քալանթարի եւ Լէնինգրադի համալսարանի ուսուցչապետ Վիչնեսկու Քննութիւնից երեւաց, որ այդ կմախքը վերաբերում է հին քարէ դարի (paleolithique) շրջանին: Հայաստանի «Նութիւնների Պահպանութեան Կոմիտէի» 1924ին եւ 1926ին կատարել տուած պեղումներն երեւան են հանել յիշեալ կմախքի թուականից հազարաւոր տարիներ վերջը կառուցուած շինութիւններ, բնակավայրեր, ամբուրիւններ, սաճարներ, քարայրներ, դամբաններ եւ այլն, որոնք երկայնագլուխ ցեղի կամ ցեղերի գործ են եւ վերաբերում են քարէ դարի վերջերի եւ բրոնզէ դարի շրջանին, որ ասել է Քրիստոսից 3000—2500 տարի յառաջ: Այս շրջանից յետոյ եկող դարի (երկաքէ դար, որի մէջ գտնուած ենք հիմայ) գերեզմաններից հանուած կմախքների գտնուելը կարնգլուխ են: Ի՞նչ ցեղի էին պատկանում այս կարնգլուխաւորները: Այս խնդիրն այժմ կարելի է լուծուած համարել, շնորհիւ այն տարօրինակ հին յիշատակարաններին, որոնք ցրուած են պատմական Հայաստանի զանազան կողմերում, մանաւանդ Վանում: Գրաւոր Պատմութեան սկսելուց յառաջ հին ժողովուրդները, կամ նրանց իշխանները՝ Ժայռերի վրայ մեխի կամ սեպի (բեւեռի) ձևով նշանագրերով արձանագրութիւններ են քանդակել, որով կամեցել են իրենց գործերի յիշատակը թողնել: Այս նշանագրերն են, որ կոչուած ենք սեպագիր կամ բեւեռագիր (inscriptions cunéiformes): Այս հին յիշատակարանները իսկապէս Տարեգիրք չեն, այն իմաստով ինչ որ մենք ենք հասկանում, այսինքն իրար յաջորդող դէպքերի անընդհատ պատմութիւն: Դրանց հեղինակները, ասորեստանցիք, ուրարտեաններն եւ այլն, արձաններ են կանգնել կամ յայտնի տեղերի վրայ արձանագրութիւններ են փորագրել միայն այն ժամանակ երբ իրենք յաղթել են, կամ իրենց արշաւանքներն ու շարժումները յաջող ելք են ունեցել. իսկ երբ նրանք պարտութիւն են կրել, բացարձակապէս լուր են...:

<sup>1</sup> Այս բարեխիղճ գիտնականը զոհ է գնացած իր եռանդուն եւ անխնայ գործունէութեան: Տեղացի բուրգ աւազակներ սպանել են նրան, կողոպտելու նպատակով: Բարեխառնաբար նրա երկարատեւ բեղմնաւոր աշխատութեան արդիւնքը չէ կորած, այլ անփաստ փոխադրուած է Պարիզ, ուր 1840ին հրատարակուեց Journal Asiatique-ում:

կոլսկի, Մառ եւ վերջերս Մէջհանինով: Իսկ հայերից առաջին անգամ Հ. Ներսէս Վ. Սարգսեան Վենետիկի Միսիթարեանն զբաղեցաւ եւ գտաւ նոր սեպագիրներ (հրատ. Վենետիկ 1864):

Առանձնապէս յիշատակութեան արժանի է Մեսրոպ եպիսկ. Սմբատեան, որ շատ կարեւոր նոր արձանագրութիւններ հրատարակեց: Անձամբ այցելած եւ ուսումնասիրութիւններ է կատարած նաեւ «Բանասէրի» խմբագիր Կ. Բասմաջեան: Լուրջ ուսումնասիրութիւններ ունին նաեւ Պետերբուրգի ուսական համալսարանի ուսուցչապետ Քերոբէ Պատկանեան եւ Գալուստ սարկ. Տէր Մկրտչեան:

Սակայն բաւական չէր այս նախապատմական յիշատակագիրները գտնելն եւ օրինակելը, պէտք էր նրանց բովանդակութիւնն իմանալ, նրանց գաղտնիքը թափանցել: Երկար ջանքերի շնորհիւ հնախոյզները յաջողեցան նախ լուսարանել զանազան նշանագրերի յայտնած գաղափարն եւ ապա որոշել թէ ինչպիսի հնչիւններ ունէին, որոնց հիման վրայ կարելի եղաւ նմանութիւն գտնել այդ սեպագիրների եւ ծանօթ հին ու նոր լեզուների մէջ: Այս մեկնութիւնների վրայ հիմնուելով հնագէտները սկսան փնտռել թէ ո՞րն էր այն ժողովուրդն, որ փորագրել ու թողել է մեզ այդ ծածկագիր յիշատակները: Իսկապէս Պրոֆ. Մէյս անգլիացի նշանաւոր բեւեռագրագէտն եղաւ, որ յաջողեցաւ լուծել այս կնճռոտ հարցը<sup>2</sup>: Հին պատմագիրների ամենամեծն ու «հայրը» յոյն Հերոդոտոսն, իր Պատմութեան մէջ երկու տեղ (III 94 եւ VII 79) խօսում է Ալարդներ կոչուած ժողովրդի մասին, որ բնակուած էր Կովկասի սահմանների վրայ, Վանի լճի եւ Երասխ գետի մէջտեղերում: Այս ժողովուրդը բաղկացած էր զանազան փոքր ցեղերից կամ տոհմերից, որոնք ունէին իրենց գլխաւորները կամ փոքրիկ արքաները: Մէյս իր ուշադրութիւնը դարձրեց Հերոդոտոսի այս պատմածին վրայ եւ եզրակացրեց թէ ալարդներն էին Վանի լճի շրջակայքի հին բնիկ-

<sup>2</sup> Sayce, On the Decyphrement of the Vannic Inscriptions: Կարեւոր է մանաւանդ այն դասախօսութիւնն, որ Մէյս կարգացել է Արեւելագէտների Հինգրոսք Համաժողովում, Բեռլինում: Նրա այս հետազոտութիւնը տպուած է Լոնդոնի Ասիական Ընկերութեան ամսագրում, 1882ին (Journal of Royal Asiatic Soc. «The cuneiform Inscriptions of Van»):

ներն եւ նրանց արքաներն են թողել այդ ծածկագիր յիշատակարանները: Ո՞ւր էին այժմ այդ ալարդները — այսինքն նրանց սերունդը եւ ի՞նչ էր նրանց լեզուն: Մէյս մեծ հմտութեամբ քննեց այս էլ, եւ մերձակայ ժողովուրդների անցեալն ու բարբառները հետազոտելով երեւան հանեց թէ ալարդեանների լեզուն պահպանուած էր կովկասեան բարբառների եւ գլխաւորաբար վրացերէն լեզուի մէջ, որով ալարդեանների սերունդը պէտք էր փնտռել Կովկասի սահմաններում:

Մէյսից յետոյ ուրիշ գիտնականներ եւս (Մէյսի եւ Հոմմէլ) պնդեցին այդ «ալարդները» կոչման վրայ, բայց երբ հաստատուեց թէ ասորեստանեան արձանագրութիւնները Վանի պետութիւնը Ուրարտու էին անուանում, հնագէտները այնուհետեւ սկսան այս վերջին անունը դործածել մանաւանդ որ նրանց բնակավայրերը միեւնոյն սահմանների մէջ էին: Ասորեստանցիների դործածած «Ուրարտուն» (կամ Ուրարտի) նոյն էր Աստուածաշունչի «Արարատ»ի կամ հայոց «Այրարատ»ի հետ: Նա շատ հեռու չէ նաեւ Հերոդոտոսի «Ալարդ»իցը: Ասորեստանցիք Ուրարտու են կոչել իրենց բնակած երկրի, որ դաշտավայր էր, հիւսիսակողմն, որ մեծ մասամբ լեռնային է, ուստի կարծողներ կան թէ Ուրարտու խօսքը նրանց լեզուի լեռնագաւառ կամ բարձրագաւառ էր նշանակում:

Վանի լիճը՝ ասորեստանցիք անուանել են Նայիրիի վերին ծով, որովհետեւ Ատրպատականի Ուրմեայի լիճը համարում էին Նայիրիի վարի ծով: Այս Նայիրի կամ Նաիրի անունը նշանակում է գետերի աշխարհ եւ առաջին անգամ ասորեստանեան արձանագրութիւնների մէջ երեւում է ԺԳ. դարում (Ն. Ք.) որ տեղ եւ յայտնապէս որոշուած է թէ Նայիրիի ժողովուրդը բնակուած է այժմ երկու ծովերի մէջ տեղի երկիրներում: Մեր հին պատմագիրները Վանի լիճը անուանում են «Բոնուենայ ծով», իսկ Ուրմեայինը «Կապուտակ ծով»:

Ուրարտեան կամ Վանի պետութեան արքաների թողած սեպագիրների մէջ տեղական ժողովուրդը կոչուած է Խալդեր, իր պաշտած Խալդի Աստուծոյ անունով, ինչպէս որ ասորեստանցիք էլ իրենց կոչումը պարտական են իրենց Ասուր աստծուն:

Վանը հիմնել է Խալդերի Մէնուաս մեծագործ արքան (810—778 Ն. Ք.), եւ այնուհետեւ երկիրն այդ քաղաքի անունով է կոչուել, որ արձանագրութիւնների մէջ Biaina ձևով է յիշուած: Ասորեստանցիները կոչել են նաեւ Bit-Ani: Վանը ունի նաեւ ուրիշ անուանակոչումներ ինչպէս են Dhuspas կամ աւելի հին ձևով Thospia որ է հայոց դործածած Տոսպը:

Վանի կամ Խալդեան թագաւորութիւնը տեւել է ճիշտ 300 տարի. սկսել է 885ին եւ վերջացել է 585ին: Նա միշտ կռուի մէջ է եղել ուրիշ հարեւան երկիրների հետ. վերջին հարուածը տուել են նրան մարերը (medes): Ուրարտուի կործանումից 25 տարուց չափ յառաջ, տապալուել էր արդէն, պարսից ձեռքով նրա հօրը հակառակորդը Նինուէն:

Վանի ձեւով կամ Խալդեան լեզուով սեպագիրներ գտնուած են Վանի անմիջական շրջանից դուրս, Հայաստանի զանազան կողմերում, որոնց ընթերցումը նոր լոյս է սփռում Անդրկովկասի ժողովուրդների փոխադարձ հին յարաբերութիւնների վրայ: Այս կերպով մենք տեղեկանում ենք, որ Խալդերը շատ արշաւանքներ են կատարել դէպի Անդրկովկաս: Նրանց Մէնուաս հօր արքան հասել է մինչեւ Լէնինական եւ այդտեղ կռուել տեղացիների հետ: Այս արշաւանքների նպատակն անշուշտ կողոպուտն է եղած: Խալդերն Անդրկովկասում, իրենց նուաճած տեղերում վարչական կենդրոններ են կազմակերպել եւ սեպագրական գաւառապետներ են դրել, որոնք իրենց յանձնուած երկիրների շինարարական գործերի մասին Վանի թագաւորին զեկուցումներ են ուղարկել: Այս պարագան հետաքրքրական է, որովհետեւ զրանից եզրակացնում են թէ Խալդեան սեպագիրների լեզուն՝ Անդրկովկասի՝ գոնէ այդ շրջանի պաշտօնական լեզուն է եղած<sup>3</sup>: Մի ուսու գիտնական սեպագրագէտ՝ Մէջհանինով՝ Երասխի աւազանի աշխարհագրական քարտէսն էր կազմել (հրատ. Բաքու 1927), որի վրայ նշանակել էր այդ տեղերի հին ուսարտեան անունները, սեպագիրների հաղորդածի վրայ հիմնուելով: Այնուհետեւ նա մի

<sup>3</sup> C. F. Lehmann-Haupt, Materialien zur älteren Geschichte Armeniens und Mesopotamiens. Göttingen 1907, էջ 105—109: — Բ. Պիտարովսկու զեկուցումը Լէնինգրադի ուսական Գիտութեան ձեռնարանին, 1931, Փետր. 23:

քանի փոփոխութիւններ է կատարած այդ քարտէսում, միշտ հաստատելով Վանի Խալդերի Անդրկովկասի կամ այժմեան Հայաստանի վրայ կատարած յիշեալ արշաւանքները<sup>4</sup>:

Գաղափար տալու համար ընթերցողներին թէ ի՞նչ ձևով եւ ի՞նչպիսի բովանդակութեամբ են կազմուած այդ սեպագիրները, աւելորդ չեմ համարում յառաջ բերել թարգմանօրէն այն սեպագիր արձանագրութիւնն, որ գտնուած է Հայաստանում, Սեւանայ լճի ճիւղէ եզերքին, ժայռի վրայ եւ որ ոչ միայն Հայաստանի այլ ամբողջ Անդրկովկասի մէջ, մինչեւ հիմայ գտնուած սեպագիրներից ամէնից կարեւորն եւ նշանաւորն է համարում: Հետեւում եմ այն զեկուցման, որ յօրինել է վերոյիշեալ Ի. Ի. Մէջհանինով եւ այն ձևով, ինչպէս որ Լէնինգրադի Գիտութեան ձեռնարանին ներկայացրել է ծանօթ բազմահմուտ ակադեմիկոս Ն. Մառ, այս 1932ին:

Այս արձանագրութիւնը 20 տողից է բաղկացած եւ շատ անգամ է հրատարակուած թէ հայ եւ թէ օտար գիտնականների կողմից, սկսելով Մեսր. եպ. Սմբատեանից, 1863ին: Ի մէջ այլոց «Հանդէս Ամսօրեայ»ն եւս զբաղած է զբանով (Սանտաճեանի յօդուածը, 1904ին): Մէջհանինով մեծ ուղղումներ է կատարել բոլոր նախորդ հրատարակութիւնների մէջ եւ նոր թարգմանութիւն է առաջարկում, որն եւ ամբողջապէս յառաջ եմ բերում ստորեւ (ուսանելից թարգմանելով).

1. «Ամենամեծ Խալդ աստծուն, աշխարհի (?) միակէս Ռուսա»
2. «Որդին Սարգուրի (ասում է). Ես այս երկիրները»
3. «Մէկը միւսից յետոյ... գերի դարձրի»
4. «Աղախունի երկիրը, Ուէլիկուսի երկիրը, Լուէրուսիէ երկիրը»
5. «Արքուքիինի երկիրը, 4 արքայ Իփանի կոչուած, մերձձեան շրջանից (приозерской области),»
6. «Գուրքումէլի երկիրը, Շապաթուախի երկիրը, Տէրիուէլախի երկիրը»
7. «Ռիշուախի երկիրը, երկիրն... Զուախի, Ախուախի երկիրը, Զամաանի երկիրը»

<sup>4</sup> Доклады Академіи Наук Ленинграда, 1930, էջ 144:

- 8. «Իրքիմատարնի երկիրը, Ելաինի երկիրը, Երեկտուարնի երկիրը,
  - 9. «Արգամանիունի երկիրը, Գուրիաինի երկիրը, Արգիբանի երկիրը,
  - 10. «Պիրուաինի երկիրը, Շիլաաինի երկիրը, Ուրգուաինի երկիրը,
  - 11. «Ատագաաինի երկիրը, Երիա...ինի երկիրը, Ագամէրունինի երկիրը,
  - 12. «19 արքաներ իշանի կոչումով, մերձլճեան չրջանի Բարանաի երկրի
  - 13. «Ընդարձակ: Ընդ ամէնը 23 արքայ մէկը միւսից յետոյ ես բունեցի,
  - 14. «Այր եւ կին, տարի Բիաինա երկու տարուան ընթացքում,
  - 15. «... ես միջնաբերդեր (citadelle) կանգնեցի,
  - 16. «...երկիրը, ... դաւառները (նուաճեցի)
  - 17. «...ընդարձակ միջնաբերդ կանգնեցի...
  - 18. «Բիաինա երկրի Տէյէբա քաղաքի աստծուն...
  - 19. «Ռուսա ասում է — (ով որ) այս (արձանագրութիւնը) կ'աւարէ...
  - 20. «Արդի աստուածը...»:
- Այս ... կէտերով նշանակուած տեղերը աւրուած լինելով անընթեռնելի են դարձել: Արձանագրութեան հեղինակ Խալդեան միապետը, Ռուսա Ա. (733—714 Ն. Ք.) չորրորդ (4) տողից սկսելով իր յիշած երկիրները, իր ասելով, «գերի է դարձրել»: Մէջջանինովից յառաջ ուրիշ սեպագրագէտներ այս երկիրների անունները տարբեր կերպով են կարդացել: Մէջջանինով իր գեկուցման մէջ ուշադրութիւն է հրաւիրում արձանագրութեան այն մասի վրայ, ուր մերձլճեան այսինքն Սեւանայ լճի մօտ «երկիրները» երկու խումբի են բաժնուած: Առաջին խումբի արքաները իփանի են կոչուած (տող 5), իսկ երկրորդ խումբինը (տող 12) իշանի: Իփանի խօսքը նման է վրացերէն իփալի = տէր եւ մէ-փէ = արքայ՝ բառերին, իսկ իշանի՝ հայերէն իշխանին: Հաւանական է, որ այս երկու բառերը իփանի եւ իշանի՝ Խալդեան լեզուի մէջ արքայական իշխանութեան աստիճաններ էին նշանակում:
- Արձանագրութեան չափն է՝ երկարութիւնը 1.34 մէտր, լայնութիւնը — .89 իսկ բարձրութիւնը 2—2<sup>1</sup>/<sub>2</sub> հարիւրորդամէտր:
- Այն ժայռին, որի վրայ փորուած է այս

սեպագրը, անմիջապէս կից տեղը հայերէն Օճաճոյ անունն է կրում, որը կապում են վիշապապաշտութեան շրջանի հետ<sup>5</sup>:

Վանի սեպագրիների վրայ մասնագիտորէն նորագոյն քննութիւն կատարողն է Պրոֆ. Լէման-Հաուպտ, որ Պրոֆ. Վալթ. Բէլլէի հետ Հայաստանի ամէն կողմը ճանապարհորդելով ամէն ինչ անձամբ տեսել ու հետազոտել է եւ այնուհետեւ իր այդ ուսումնասիրութիւնների արդիւնքը հետզհետէ հրատարակել է «Հայաստանը անցեալում եւ այժմ» խորագրով (Armenien einst und jetzt): Այս կարեւոր աշխատասիրութիւնը, ամբողջովին արդէն լոյս է տեսած (Ա. հատորը 1910ին, Բ. հատորի, Ա. մասը 1926ին եւ Բ. մասը 1931ին) նա բովանդակում է բազմաթիւ պատկերներ, լուսանկարներ եւ առանձին՝ սեպագրի արձանագրութիւնների տախտակները (Corpus Inscriptionum Chaldicarum):

Ո՞ր տեղից են Վան եկել այդ արձանագրութիւնների հեղինակ Խալդերը: Ոմանք ենթադրում են թէ նրանք կովկասեան ցեղ են եւ եկել են հիւսիսից: Ընդհակառակն Լէման-Հաուպտ այս տեսակէտը «մէթոդական սխալ» է համարում եւ աշխատում է հաստատել թէ խալդերը արեւմուտքից դիմել են դէպի արեւելք, Վանի լճի կողմը, Մալաթիայի (Melitene) եւ Գիարբէքիի վիլայէթի ճանապարհներով: Նա կապում է Ուրարտուի կամ Խալդեան մշակոյթը փոքրասիական ժողովուրդների մշակոյթի հետ<sup>6</sup>: Այս դիտարկան պատմաբանը արդէն մի ուրիշ աշխատութեան մէջ կանխապէս այն միտքն է յայտնել թէ հաւանական է, որ Խալդեան ժողովուրդի բարձր խալդեր հնդկ-գերմանական (indogermanique) ցեղի խոնուորդ են<sup>7</sup>:

Խալդեան սեպագրիների յաջող ընթերցումից եւ վերլուծումից յետոյ էլ, Վանում, կամ հին ձեւով Բիաինա-ում տիրող ժողովուրդի ցեղի եւ նրա խօսած լեզուի մասին՝ հնագէտների կողմից միմեանց հակասող կարծիքներ են յայտնուած, որոնք դեռ եւս չարունակուած են:

Վերեւ տեսանք Սէյսի համոզումը թէ

<sup>5</sup> Известия Академии Наук Союза Совет. Соц. Республик, Отдел обществ. Наук, 1932, № 1 (Bulletin de l'Académie des Sciences de l'Union des Républiques Sov. Soc., VII série, Classe des Sciences Sociales), 1932, № 1.

<sup>6</sup> Lehmann-Haupt, Armenien einst und jetzt. Բ. հատոր, 594—595 էւ այլն:

<sup>7</sup> Hartmanns Weltgeschichte, I, 1, 3. Aufl.

այդ սեպագրիները գրողները Խալդերներն են եղած, որոնք կովկասեան ցեղից էին եւ որոնց գլխաւորներն են այժմեան վրացիք: Այս մասին աւելի որոշ է պատմաբան Լընորման, որ գրում է.

«Այն ժողովուրդն, որ փորագրել է այս արձանագրութիւններն եւ որ մինչեւ 2. դար (Ն. Ք.) այս երկրի միակ է եղել, ոչ մի կապ չունի հայոց հետ, որոնցից թէ լեզուով եւ թէ ցեղով նա տարբերուած էր: Հայերը հաւանականաբար վերջին սեպագրի փորագրութեան յետոյ են եկել եւ հաստատուել: Հայերը բնի են բնիկներին դէպ ի հիւսիս, այն երկիրն, որ հիմերը Իվերեա (Ibérie) են կոչել, իսկ այժմ Géorgie (վրաստան) անունն է կրում»<sup>8</sup>: Հնագէտների եւ լեզուագէտների մեծ մասը ընդունում են Սէյսի եւ Լընորմանի այս տեսակէտը: Բայց եղան լուրջ դիտարկաններ, որոնք տարբեր հայեցակէտից առաջնորդուելով, համաձայն չեն դրա հետ: Այսպէս Մասպէրօ՝ միայն ծանօթութեան մէջ է յիշում Լընորմանի եզրակացութիւնն, առանց շատ կարեւորութիւն տալու: «Լընորման, ասում է նա, փորձեց համեմատել արարատեան սեպագրիների լեզուն վրացերէնի հետ»<sup>9</sup>: Մի ուրիշ Պրոֆէսոր, Տոմսկի համալսարանի ուսուցչատեղը Գլէյէ՝ գրում է. «Հայաստանի նախկին բնակիչների ազգագրական դիրքը վերջնականապէս պարզուած չէ...: Ճիշդ չէ այն կարծիքը թէ Վանի սեպագրիների լեզուն քարձիլեան (վրացերէն) է»: Գլէյէ փորձեց ապացուցանել թէ Վանի սեպագրիների լեզուն կովկասեան լեռնականներից լեզուների լեզուախումբին է պատկանում<sup>10</sup>:

Վանի սեպագրիների լեզուի վրացերէնի հետ կապ ունենալու գլխաւոր ապացոյցը բառերի վերջաւորութիւններն էին, ինչպէս է, նի, ինի, անի, որոնք յատուկ են վրացերէնին, եւ մանաւանդ էրի (յոզնակի շինող) եւ էք-ի (տեղ նշանակող) մակերիները: Այս վերջաւորութիւնները կային ոչ միայն գոյական անունների վրայ, այլ նաեւ խօսքի ուրիշ մասերի մէջ: Բայց եղան նաեւ այնպիսիներ, որ Վանի սեպագրիների լեզուն հայերէն կարծեցին:

Պր Վանի սեպագրիների լեզուն հայերէն կարծեցին:

Գերմանացի Մորդման դեռ եւս 1872ին կարծիք էր յայտնել թէ Վանի լեզուն արիական էր եւ հին հայերէն: Նա աշխատում էր հայերէն բառացանկով եւ քերականութիւնով ապացուցանել իր այս կարծիքը: Մորդմանի այս ենթադրութեան առաջին հերքողն եղաւ Պետերբուրգի համալսարանի հայերէնի ուսուցչատեղ Քերոբէ Պատկանեանց, որ 1873ին Պարիզում կայացած Արեւելագէտների Միջազգային ժողովում զեկուցում կարդաց եւ եզրակացրեց թէ «այն քերականութիւնն, որ Մորդման առաջարկում էր, հայերէն չէր եւ ոչ էլ արիական եւ թէ նրա կարծած բառերի մէջ ոչ մի բառ չկար հայերէն...»: Բայց Պատկանեան չէր ընդունում նաեւ Լընորմանի կարծիքը Վանի սեպագրիների վրացերէն լինելու մասին. նա պնդում էր թէ Լընորման չէ կարդացել այն արձանագրութիւններն, որոնք Վանի յատուկ բեւեռատուերով են գրուած:

Մի ընդարձակ եւ մանրակրկիտ ուսումնասիրութիւն ունի այս մասին Յովս. Վ. Սանտալճեան որի եզրակացութիւնը հետեւեալն է. «Ուրարտուի արձանագրութիւնների լեզուն, եթէ նրա մէջ գտնուած ասորեականեան եկամուտ բառերը դուրս ձգենք՝ պատմական ժամանակների սկզբի հայերէն կարելի է համարել: Եթէ մենք քննենք Նայիր-Ուրարտուի բոլոր շրջանների տեղականաշխարհագրական կոչումներն եւ իշխող փոքր արքայական հարստութիւնների անունները, կարող ենք կատարեալ իրաւամբ ասել թէ ամէն տեղ հայ-յունական լեզուն էր տիրապետողը, արիական ուրիշ տարբերի խոսնուած...: Ասորեստանեան լեզուական տարբեր անշուշտ մտել են հայոց դասական բարբառի մէջ, խաղաղ միջոցներով, բայց Հայաստանի հիւսիս-արեւելեան մասում խօսուած լեզուն հայերէն էր»<sup>11</sup>: Հայ հեղինակն անկասկած մեծ հմտութիւն եւ գովելի եռանդ է ցոյց տուել Հայաստանի հին, հեթանոսական ժամանակի պատմութիւնն ուսումնասիրելով, բայց մասնագէտների կարծիքով նրա ուսումնասիրութեան հիմքն եւ պատճառաբանութիւնը — ուղիղ չեն: Սրանց ասելով, Սանտալճեան՝ իր այս կանխապա եզրակացումը:

<sup>8</sup> F. Lenormant, Histoire ancienne de l'Orient. Paris 1882. T. IV, էջ 245—246:

<sup>9</sup> Maspero, Lettres assyriologiques. T. I, էջ 124—125:

<sup>10</sup> Опыт решения Ванского (урартского) вопроса. Сборник материалов для описания местностей и племен Кавказа. Тифлисъ, 1907, № 37.

<sup>11</sup> Sandalagian, Les Inscriptions cunéiformes Urartiques. Venise 1909. Vol. I, էջ 77:

ցութեան յանգելու համար, սեպագիրների ընթերցման համար ընդունուած սովորական եղանակից տարբեր ձև է գործածել եւ ստուգարանական օտարոտի նմանութիւններից է առաջնորդուել: Մի խօսքով նրա եզրակացութիւնը՝ թէ Վանի սեպագիրների լեզուն հին հայերէն է, թէեւ աւելի լաւ ուսումնասիրուած եւ հիմնաւորուած քան Մորզմանինը, — գիտութեան կողմից չէ ընդունուած: Հայր Տաշեան եւս գտնում է թէ Սանտալճեանի մեկնութիւնը «ոչ հաստատուն է եւ ոչ առանց կասկածանայ»:

Յօդուտ վրացերէնի հօր պաշտպան հանգիստացաւ հոգեկաւոր հայագէտ եւ վրացագէտ Նիկ. Մառ, որ պնդեց թէ Ուրարտուի բնիկների լեզուն ազգակից է քարթվէլեան (վրացական) լեզուախումբին, յատկապէս վրացերէնին եւ սվաներէնին: Այս կերպով նա տեղակցական կապ էր հաստատում հին ուրարտուցիների եւ այժմեան քարթվէլեան (վրացիների) մէջ, մանաւանդ որ, ինչպէս վերը յիշեցինք, Հերոդոտոս էլ նախկին ուրարտուցիներին ալարադներ կոչելով, տեղաւորում էր Անդրկովկասի հարաւում, ուր նրանք քաշուել էին արմէնների Վանը գրաւելուց յետոյ <sup>12</sup>:

Ե՞րբ է պատահել այս գրաւումը. այսինքն ե՞րբ են եկել հայ-արմէնները եւ խաղաղութիւն տեղը անցնելով պատմական Արմէնիա-Հայաստանը կազմակերպել:

Սեպագիրների մէջ, Զ. դարից (Ն. Ք.) սկսած դադարում է Ուրարտու, Սալդի եւ Բիաինա (Վան) անունները յիշատակութիւնը եւ նրանց տեղ երեւում է մի նոր անուն, Արմինա եւ Արմանիյա ձեւի տակ: Հետեւաբար մի նոր ժողովուրդ, արմինա կամ արմէն կոչումը կրող, եկել, գրաւել է Սալդերի տեղը:

Արմինա կոչումն առաջին անգամ երեւացել է Դարեհ Վշտասպեան պարսից արքայի (520—485) սեպագիր արձանագրութեանը մէջ, Բէհիստունի (կամ Բիսիտունի) ժայռի վրայ: Իսկ գրաւոր պատմութեան մէջ արմէնից առաջ հայ-արմէնների վրայ խօսողը Հերոդոտոսն է եղած, «Պատմութեան Հայրը» ինչպէս նա կոչուել է, իր տուած ընդարձակ տեղեկութիւնների եւ իր անկեղծութեանը

<sup>12</sup> Պ. Մառ այս լեզուական խնդիրն աւելի ընդարձակելով ալարադների լեզուն կապում է ուրբէ հին լեզուների հետ եւ այս բոլորն անուանում է յարեթական լեզուախումբ:

պատճառով: Հերոդոտոս պատմում է թէ պարսից մեծ արքան Դարեհ Վշտասպեան (523 Ն. Ք.) իր հպատակ ժողովուրդները 20 սատրապութեան էր բաժանած: Այս սատրապութիւններից (վարչական նահանգ) 3դի մէջ մտնում «արմէններն եւ հարեւան ցեղերը մինչեւ Եւքսինեան Պոնտոս» (Սեւ ծովի եզերքը) (Գիրք Ա. 180): Այս արմէններն ասում է սա փոխազգիների ցեղակից էին: Ո՞վ էին այս փոխազգիք: «Փոխազգիները կոչուած էին Բրիւգներ (bryges) երբ Եւրոպայում էին եւ Մակեդոնեայում բնակուած, իսկ երբ այնտեղից գաղթեցին եւ տեղափոխուեցան Փոնթեա (Փոքր Ասիայում) այն ժամանակ, իրենց անունը փոխեցին եւ սկսան փոխազգի կոչուել: Արմէններն այս փոխազգիների գաղութն են եւ նրանց պէս են զինուած» (Գիրք է. 73): Մի ուրիշ տեղ նա ասում է. «Փոխազգիները ամէնից աւելի հարուստ են ոչխարների հօտերով եւ մրգեղէնով: Արմէնները փոքրաթիւ հօտեր ունին մեծ քանակութեամբ» (Գիրք Ե. 49):

Ուրեմն հայերը Հերոդոտոսի ժամանակ (Ն. դարի միջինքին Ն. Ք.) խաչնարածներ են եղել, փոխազգիան-մակեդոնական ծագումից: Եւ այս խաչնարած ժողովուրդը Կապադովկիայից հեռո՞ւն էր գնացել աստուածուելով հասել է Վանի լճի շրջակայքն, այնտեղ, անշուշտ ոչ մի անգամից, այլ երկար ժամանակի ընթացքում, Սալդերին վանելով եւ մասամբ իր մէջ ձուլելով, ստեղծել է պատմական Հայաստանը:

Արմէնների փոխազգիան ծագումը հաստատում է մի ուրիշ յոյն հեղինակ՝ Եւդոքսիոս, որին հիները «ամէն տեսակ գիտութիւնների հմուտ» էին հռչակել: Սա վկայում է թէ «արմէնների լեզուի հնչիւնները շատ նման են փոխազգիաններին»: Այնուհետեւ Ստրաբոնն եւ ուրիշ արտաքին մատենագիրներն եւս խօսում են յաճախ արմէնների մասին եւ այս կոչումը ոմանք էլ ոմն Արմէնոսից են քաղաքից եւ ոմանք էլ ոմն Արմէնոսից են ծագած համարում: Այս Արմէնոսն ըստ ասանդութեան Կողքիսի վրայ արչաւող եւ ոսկեզեղմը փնտռող արգոնալթների ընկերն է եղել:

Մարկուարտ գերմանացի բանասէրն, ո՛ր այնքան լուրջ հետազոտութիւններ ունի Փոքր Ասիոյ վրայ, ի՞ր վերջին ուսումնասիրութեան մէջ, որ «Հայոց օրրանը» խորագիրն է կրում,

ասում է թէ Թէսալեայում (Մակեդոնեայում) Armenion անունով քաղաք չկար, այլ Ormion. լեզուագիտական տեսակէտից արմէն անունը կապ չունի օրմէնիոնի հետ: Յոյները, շարունակում է Մարկուարտ, այս արմէնոս կոչումը առել են հին պարսիկներից, որոնք իրենց դրացի երկիրը կոչել են Արմինա, իսկ ժողովուրդը Արմինեա կամ Արմանիեա:

Մարկուարտ համոզուած է թւում թէ այս անունը ծագում է արմ, արիմ կամ արում արմատից, որի վրայ աւելացել է Սալդիական ինի մակդիրն եւ դարձել է արմէնի, այնպէս ինչպէս կազմուած է Սալդ-Սալդերինի բառը:

Արմէն կոչումի ամենահին յիշատակութիւնը ըստ Մարկուարտի, կայ Հոմերոսի Իլիականի մէջ, արիւմի ձեւի տակ: Այնուամենայնիւ Մարկուարտ եւս հաւանական է համարում, որ արմէնները բնակել են Թրակիայում <sup>13</sup>:

Հայոց մէջ առաջին անգամ Զ. Յովս. Վ. Գաթրըճեան ուշադրութիւն է դարձրել, որ հայ նախնի նահապետները թէ Մովսէս Սոբրեանցու քով եւ թէ Սերէոսի ցուցակում ընդհանուր արմա մակդիրն են կրում, ինչպէս է Աստուածաշունչի մէջ Tog-arma:

Մորզան ընդունում է հայոց Փոնթական ծագումն եւ նրանց այնտեղից ելլելու եւ Փոքր Ասիայում յառաջանալու մասին հետեւեալ թուականներն է դնում, որոնք անշուշտ անփոփոխելի չեն <sup>14</sup>:

Ո՞րտեղից եւ երբ են նրանք Մակեդոնիա եկել — յայտնի չէ, իսկ Մակեդոնիայից Վոսիսոսի նեղուցով նրանք Փոքր Ասիա են անցել Ն. Ք. 1250ին:

Փոնթիայում տեղաւորուել են Ն. Ք. 1000ին:

Արմէնները բաժանուած են փոխազգիներից Ն. Ք. 800ին:

Արմէնները արչաւում են Ուրարտու-Վանի վրայ Ն. Ք. 600ին:

Իր ժամանակ մեծ հետաքրքրութիւն շարժեց մի լուրջ գիտնականի, Ենսէնի դիւար թէ հայերը սերում են հաք կամ հիթթիթ կոչուած հին, այժմ անհետացած փոքրասիա-

կան ժողովուրդից, որ երբեմն մեծ պետութիւն էր կազմակերպել Փոքր Ասիոյ կենդրոնում: Նա գտնում էր թէ մեծ նմանութիւն կար հաքերի եւ հայերի ոչ միայն անուան այլ եւ տեղական տիպի մէջ, Ենսէն աշխատում էր ապացուցանել հաթերի լեզուի եւ հայերէնի ազգակցութիւնը հնդեւրոպական լեզուների շարքում: Այս տեսութեան համեմատ հաքերը կամ հիթթիթներն էին հայոց նախահայրերն եւ ոչ թէ փոխազգիք: Ոմանք, այս տեսութիւնը բոլորովին չընդունելով հանդերձ, հաւանական էին գտնում, որ հայ կոչումն իսկապէս ծագած լինի հաք անունից եւ թէ հաք կամ հիթթիթ ցեղի փոխազգի արմէնների հետ խառնուումից կազմուել է հայ ժողովուրդը: Բայց Ենսէն բարեխղճօրէն ընդունում էր թէ վերջնական եզրակացութեան դալու համար պէտք էր հաթերի թողած բազմաթիւ հին յիշատակագիրները ամբողջութեամբ եւ անսխալ վերլուծել, ինչպէս եղած է ասորեստանեան բեւեռագիրների եւ եգիպտական մեհենագիրների նկատմամբ. իսկ հիթթիթական մեհենագիրների վերաբերմամբ դեռ ոչ: Մինչեւ հիմայ երեւան հանուած հիթթիթական կամ հաթեան յիշատակագիրներն ընդգրկում են 400ամեայ շրջան: Լէման-Հաուպտ համամիտ չէ Ենսէնի տեսութեան <sup>15</sup> եւ ոչ էլ Մորզան, որ հիթթիթների մեհենագիրները դեռ եւս դադարեցի տակ ծածկուած է համարում <sup>16</sup>:

Ուշադրութեան արժանի է նմանապէս մի ուրիշ գիտնականի Լուչանի կարծիքը հայոց ծագման մասին: Լուչան այս նպատակով կատարած ուղեւորութիւնից եւ հետազոտութիւններից յետոյ, այն եզրակացութեան է եկել թէ Յառաջակողման Ասիոյ նախկին բնիկները տեղական ցեղ են, որը նա գանգերի ընդթեւամբ բնորոշում է եւ անուանում protoarmenisch կամ armenoïd (նախահայ կամ հայատիպ): Այս հարցի վերաբերեալ կան դեռ հին եւ նոր բազմաթիւ ուսումնասիրութիւններ, որոնց տեսութիւնը մեզ շատ հեռու կը տանէր: Այս բոլորը մանրամասնօրէն եւ մասնագիտօրէն քննուած է մեր մեծ բանասէր Հայր Յակոբոս Վ. Տաշեանի (Վիեննայի

<sup>13</sup> Dr. Jos. Markwart, Le berceau des Arméniens, Revue des Etudes Arméniennes. Paris 1928, էջ 213—231:

<sup>14</sup> De Morgan, Histoire du peuple arménien. Paris 1919. Chronologie.

<sup>15</sup> Armenien einst und jetzt. Բ. հատոր, էջ 694—695:

<sup>16</sup> Morgan, La préhistoire Orientale. Paris 1927. Գ. հատ., էջ 340:

Միջիթարեան) կողմից, որ յարուժեցայն կարծիքին, թէ Հերոզոտոսի պատմածը հայոց փոխազական ծագման մասին պէտք է վերաբնեն<sup>17</sup> :

Քննենք այժմ խաղերի տիրապետութեան շրջանը մեր ազգային զրոյցների հետ համեմատելով :

Սեպագիրների ընթերցումովն եւ մեկնութիւնով մեր աւանդական նախահայրերի գործերն ուղղակի կենդանանում են, բայց տարբեր լոյսով եւ տարբեր կերպարանքով : Մեր նախնական շրջանի աւանդութիւններն եւ առասպելները թէեւ առ հասարակ պատմական ստուգութիւն կամ պատմական նշանակութիւն չունին, բայց նրանց մէջ կան այնպիսի նիւթեր, որոնք երեւան են հանում եւ մասնանիչ են անում մեր նախնական մշակոյթի բնորոշ տարրերը : Ամէնից առաջ ուշադրութեան արժանի է այն հանգամանքն, որ Ուրարտուի վրայ կամ Վանի սեպագիրների վրայ ժամանակակից գիտնականների ծանօթութիւնն ու հետաքրքրութիւնը հրաւիրողը եղած է մեր այնքան խճրճուած (յաճախ-անիրաւացի) պատմագիրը, Մովսէս Խորենացին կամ նա, որ ծածկուած է այս անուան ներքեւ : Խորենացին է, որ պատմում է թէ այս տարօրինակ նշանագիրները ծանօթ էին մեր նախնիներին, որոնք զարմանքով էին դիտում եւ ի հարկէ ոչինչ չէին հասկանում : Ինքն էլ ոչ կարողացել է հասկանալ եւ ոչ էլ որ եւ է մէկից նրանց բացատրութիւնը լսել, այդ պատճառով էլ իր պատմութեան մէջ չէ դրել : «Որպիսութիւն գրութեանն յօրինուածոյ ոչ ի լսելիս մեր հասեալ ճշմարտութեամբ յումեքէ, եւ ոչ մեք ի պատմութիւնս հիւսել հաւանիմք» ասում է նա բարեիդօրէն : Խորենացին իր լսած զրոյցին հետեւելով Շամիրամին է վերագրում այս սեպագիրները. «զամենայն երեսս քարին, ասում է նա, իբրեւ դրչաւ զմոմ հարթեալ, բազում գիրս ի նմա գրեաց, որոյ հայեցուածն միայն զամենայն ոք ի զարմանս ածէ» : Խորենացին նոյն Շամիրամ, ասորեստանեայց թագուհուն է վերագրում Վանի հիմնարկութիւնն, ինչպէս նաեւ նրա անունով յայտնի հսկայական ջրմուղը : Բայց մենք հիմայ, սե-

<sup>17</sup> Ուսումն. Գասական Հայերէն լեզուի. Անգիր Ժամանակը. Ա. հատոր. Վիեննա 1920: Հ. Յ. Տ., Հանդէս Ամսօրեայ, «Հաթեր եւ Ուրարտեանք», 1931 եւ 1932:

պագիրները ընթերցման շնորհիւ դիտենք, որ այս մեծագործութիւնը պատկանում է Ուրարտուի Խաղեան արքայ Մէնուասին : Ոչ միայն այս՝ այլ Խորենացու պատմութեան մէջ յիշուած շատ դէպքեր, որոնք Հայկազանց հարստութեան պատկանող նահապետներին են վերագրուած, ուղղակի յիշեցնում են ուրարտեան իշխանների ձեռքով կատարուած գործերը, թէեւ այլափոխուած ձեւով, որ շատ բնական էր, ի նկատի առնելով դարերի այն երկար շարքն, որ պնդել էր Ուրարտեանների շրջանից յետոյ : Այս նմանութիւնը տեղական հայկական աւանդութեան եւ սեպագիրների պատմածի մէջ, նկատուած է ոչ միայն քաղաքական անցքերի այլ եւ կրօնի, աշխարհագրութեան եւ այլ հանգամանքները վերաբերութեամբ : Առնենք օրինակի համար Արամ անունը : Ասորեստանեան սեպագիրները յիշում են այդ անունը՝ Արամէ ձեւի տակ եւ համարում են Ուրարտուի թագաւոր : Մրա մայրաքաղաքը կոչում են Արգաշիու, որոմանք նոյնացնում են այժմեան Արածանիլ կամ Արծնի հետ : Այս Արգաշիու անունը դարուում է իբրեւ մայրաքաղաք յիշուելուց երբ շինուած է Վանը, նախ Տուսպա եւ ապա Բիաինա կոչումներով : Հետաքրքրական է, որ Ուրարտեանների շատ տեղական անունները նոյն ձեւով հարազատութեամբ պահպանուել են հայոց քով, մինչեւ Արշակունեաց եւ Բագրատունեաց ժամանակները այսինքն 2500 տարի անցնելուց յետոյ եւս, մինչեւ որ թրքական տիրապետութեան տակ եւ թուրք-թաթար լեզուի ազդեցութեամբ բոլոր այդ հին տեղական անունները յեղաշրջուել են, երբեմն անձանաչելի դառնալու աստիճան<sup>18</sup> :

Ուրարտուի թագաւորութեան անկումովը նրա նշանաւոր արքաների սերունդն, ըստ երեւոյթին, բոլորովին չէ կորել : Հայ նախարարական բազմադարեան տոհմերը, Արծրունիները, Ռշտունիները, Բզնունիները, գուցէ եւ ուրիշներ, այդ Խաղեան միապետներից, Մէնուասներից, Արգիստիաններից եւ Ռուսասներից սերած են համարուում<sup>19</sup> :

Հայ անունը, Մովսէս Խորենացու աւան-

<sup>18</sup> Մանրամասնութիւնները կարելի է տեսնել Հայր Յակոբոս Վ. Տաշեանի վերեւ յիշուած մեծարժէք երկասիրութեան մէջ. Ուսումն. Գասական Հայերէն լեզուի. Վիեննա 1920, էջ 383—425:

<sup>19</sup> K. Aslan, Etudes Historiques du peuple armenien, էջ 46:

դածի համաձայն, մեր Ժողովուրդը Ժառանգել է մեր նախահայր համարուած Հայկից, որ եղել է «գեղապատշաճ եւ անձնայ, քաջազանդուր, խայտակն եւ հաստարազուկ» : Օտարների տուած արմէնը՝ նրա ասելով ծագում է Հայկի սերունդ Արամի կամ Արմեանկի անուններից :

Արգեօք այս Հայկն, որ այնքան մեծ դեր է խաղացել մեր Ժողովրդական հին աւանդութեան մէջ, չէ՞ եղած այն առաջնորդն, որ խաչնարած արմէններին բերել է Վանի վրայ եւ այնտեղ իր բնակութիւնը հաստատել : Հայկի աւանդութեանը կը վերադառնանք հետագայ Գլխում : Այսպէս թէ այնպէս, ակնհերեւ է, որ արմէնները Խաղերի տեղը գրաւելուց յետոյ հետզհետէ կոռուով կամ խաղաղ միջոցներով, ընդարձակել են իրենց նոր բնակավայրն, որ այնուհետեւ իրենց անունով Արմինա եւ Արմէնիա է կոչուել, փոխանակ Ուրարտուի, (կամ հին Բիաինայի) եւ դարձել է մեր պատմական Հայաստանը :

Ի՞նչ եղան եւ ո՞ւր գնացին Խաղերը հայերի յաղթական յառաջխաղացումից յետոյ : Այս մասին Քսենոփոն շահեկան տեղեկութիւններ է հաղորդում : Այս յոյն զօրական-մատենագիրը նրանց պատահել է եւ մինչեւ իսկ կոռուել է նրանց հետ, երբ յունական կամաւորների «Տասնհազարնոց» բանակը Պարսկաստանից ետ էր դառնում, Հայաստանից անցնելով դէպի Սեւ ծով-Յունաստան երթալու համար<sup>20</sup> :

Քսենոփոնի ասելով հայերը գրաւել էին բոլոր դաշտավայրերը, Խաղերին քշելով երկրի լեռնային մասերը : Հայաստանը նրա ասելով «ընդարձակ եւ բարբեր երկիր է» : Արմէններին նա բնորոշում է խաղաղասէր, բարեբարոյ եւ հիւրասէր, իսկ Խաղերին աղբատ, անկախութիւն սիրող եւ աւելի ուղիղ քան արմէնները :

Տարակոյս չկայ, որ Ուրարտուի հին տէրերը նորեկ արմէններից մղուած հեռացել են երկրից, բայց բոլորը լեռնազաւառները

<sup>20</sup> Քսենոփոն իր «Անաբասիս» համբաւուոր ուղեգրութեանը մէջ այս Խաղերին սխալմամբ քաղաքացի է կոչել, անունների նմանութիւնից շփոթուելով : Կարողոյն քննիչները ուրիշ տեղագրական թերութիւններ էլ գտնում են այդ գրութեանում : Օրինակի համար նա իջեւանել է մի գետի մօտ, որը նա Տիգրիսն է կարծել : Քննիչներն ապացուցանում են, որ նա գտնուած էր Բիթլիսի մօտ եւ նրա տեսած գետը «Բիթլիսի-Ղուր» կոչուածն էր : L'Anabase, Retraite des dix mille, commentaires militaires par le colonel A. Boucher. Paris 1913:

չեն քաշուել : Ընդհակառակն մեծամասնութիւնը, մէջն առնելով գուցէ նաեւ այդ լեռնականների մի մասը, քաշուել են դէպի հիւսիս եւ արեւելք : Ինչպէս վերեւ յիշեցինք, Հերոզոտոս նրանց գտել է Յ. դարում (Ն. Ք.) եւ տեղաւորում է հարաւային Անդրկովկասում, ալարոզներ կոչման տակ : Հայ Աշխարհագրութիւնն եւս պահպանել է նրանց անունը Խաղտիք գաւառում, Սեւ ծովի եզերքին, Վրաստանի սահմաններում : Խաղտիքը Լազիստանն է, որի բնակիչները լազեր եւ միանգամայն փան են կոչուում, որոնց բարբառը քարթլէլեան (Վրացական) լեզուախումբի մաս է կազմում :

Հայ աշխարհագրութիւնը պահպանել է Խաղերի յիշատակը նաեւ Խաղտաձոր գաւառական անուան մէջ : Այս Խաղտաձորը, գտնուում է Խաղտիք-Լազիստանի սահմանակից Արդանուշի գաւառում (հայոց հին Կղարջքը) որ նոյնպէս Պատմական Վրաստանին է պատկանել : Խաղտաձոր անունը հետզհետէ Ժողովրդական գործածութեան մէջ կրճատուելով (Խաղտաձոր = Խէղտաձոր =) դարձել է Խէձոր, ինչպէս նա կոչուում է հիմայ : Խէձորը՝ Արդանուշի գիւղերից մէկն է, որի բնակիչները մահմետականացած Վրացի են եւ խօսում են լազերէնի մօտ բարբառով :

Խաղ կոչումը պահպանուած է նաեւ Ագաթանգեղոսի Վրացերէն քարգամուտքեան մէջ (այս մասին պիտի խօսիմ պատմութեանս Գ. գլխում) :

Ըստ Միաբանի (Գալ. Տէր Մկրտչեան) ուրարտեան-խաղերի մնացորդ են նաեւ Հայաստանի սահմաններում գտնուող ուտէացիք, որոնք ձուլուել են հայութեան մէջ, երբ հայերը գրաւել են նրանց բնակավայրը :

Հայոց ծագման եւ ուրարտուցիների ցեղի եւ լեզուի վերաբերեալ հարցերն, որոնց ամփոփումը տուի վերեւ, դեռ իրենց վերջնական լուծումը չեն գտած : Ինչպէս իրաւամբ ասում է Հայր Տաշեան. «Եթէ ամէն հնախօսական ճիւղերու մէջ նոյն իսկ պատահական գիւտ մը, աւելի եւս պեղում մը, մեր ծանօթութիւնները ոչ միայն կ'ընդարձակեն, այլ նաեւ հիմնովին կը փոփոխեն, եւ նոր ասեղծութեան կը դնեն մեր առջեւ, նոյնն աւելի կ'արժէ այսպիսի նիւթերու համար, մեր ծանօթութեանց արդի վիճակի մէջ» (Հանդէս Ամսօրեայ, 1932, էջ 418) :

Լիովին համաձայնելով հանդերձ այս տե-

սակէտին, ես կարծում եմ թէ ի նկատի առնելով մինչեւ հիմայ կատարուած լեզուագրութեան եւ ազգագրական քննութիւնները, կարելի է հետեւեալ եզրակացութիւններին յանգել, իբրեւ ամէնից աւելի հաւանականը:

Ա. Նայիրիի (Եփրատ գետի հովիտում) բնակուած այն ցեղերն, որոնք յիշուած են ասորեստանեան սեպագիր արձանագրութիւնների մէջ, ո՛չ սեմական եւ ո՛չ արիական ժողովուրդներ են, այլ կովկասեան:

Բ. Հայերը հնդեւրոպական, արիական ծագում ունին, գաղթած են ուրիշ արիական ցեղերի հետ Մակեդոնիայից. անցել են Վոսփորը (Բոսփորը) տեղաւորուել են նախ Փոնտիայում, Կապադովկիայում եւ ապա կամաց կամաց յառաջանալով դէպի արեւելք զրաւել են Սալզերի երկիրն, որոնք արդէն ուժասպառ էին եղած գրեթէ մարերի յարձակումից: Նրանք անշուշտ առանձին չէին այս արշաւանքի մէջ. նրանց ընկերացել են մասնաւորապէս կիմմերներն, որոնք նոյնպէս արիական-թրակիական (մակեդոնական) ծածուկից էին: Արմէններն Վանը եւ լճի շրջակայքը զրաւելով հետզհետէ ընդարձակել են իրենց երկիրն եւ ստեղծել են պատմական Հայաստանը:

Գ. Վանի սեպագիրների հեղինակ խալդերը նախնիքն են մի կողմից ալարոզների (Անդրկովկասի հարաւում), միւս կողմից լազերի (Սեւ ծովի եզերքի վրայ): Իսկ այս երկու ցեղերն էլ խառնուած են կամ պատկանում են քարթլեան ցեղախումբին, որի գլխաւոր կամ հական մասն են վրացիք:

Հետեւաբար՝  
Դ. Հայ եւ վրացի ժողովուրդների առաջին յարաբերութիւնները տեղի են ունեցել 2. դարում (Ն. Բ.) երբ արմէնները ընդհարուել են խալդերի հետ Վանի շրջակայքում եւ նրանց երկիրը զրաւելով իրենք են հաստատուել այնտեղ:

Անցնինք այժմ յատկապէս քարթլեան ցեղախումբին:

(Շարունակելի):

ՍԱՐՈՒԽԱՆ



### ՆԵՐՈՆ ԿԵՅՍԵՐ ԸՐԵԻԵԼԵՆ ՔՐՉՈՒՆԵՐ ԿԵՆՈՒԹԻՒՆԸ

ՊՐ. ՎԵՌՆԷՐ ՉՈՒՐ

(Շարունակուելի):

2. Արեւելեան Իրանի քաղաքական յարաբերութիւնները առաջին դարում:

Արեւելեան Իրանի քաղաքական յարաբերութիւններու վրայ մեր ծանօթութիւններու ազդելը կը կազմեն զրաւանութեան մէջ ցրուած քանի մը տեղեկութիւններ եւ անոր իշխաններու զբաղմունքն անոնք, որոնք կրնան այս շրջանին մէջ զետեղուիլ: Մեր քննութեան մեկնակէտը պիտի ըլլայ երկիրն այն կարգը, զոր Իսիդոր Սարաբսացի՝ հնագոյն արշակունեան հարստութեան կործանման յաջորդող անմիջական շրջանէն պահած է մեզի<sup>28</sup>:

Իսիդոր Աւգոստոս կայսեր կողմանէ հեռուոր արեւելք զրկուեցաւ, որպէս զի աշխարհագրական հետախուզումներով Կ. Կեսարի, որ Ք. յստաջ 1ին արեւելք մեկնած էր, ուղիմական գործողութիւնները նախապատրաստէ<sup>29</sup>: Այդ միջոցին Մարգիանս ովասիսը Տիգրոնի պետութեան հիւսիսարեւելեան սահմանազաւառը կը կազմէր: Ապաւարկտիկէ կամ Ապաւորտենէ տափաստանը, Ոքսոսի եւ Պարսիսաթրաս լեռնաշղթային միջեւ, հաղորդակցութեան միջնորդն էր դէպի պարթեւ-վրկանեան միջնորդաւանները: Մարգիանսյէ հարաւ դանուով երկիրները, Արէա, Դրագիանա, Շակաստան եւ Արաքոսիա, որ պարթեւ ազգի թագաւորներու տակ ժամանակ մը անկախ պետութիւն եղած էին<sup>30</sup>, այս միջոցին զարձեւալ հպատակ էին արքայից արքային: Արեւելեան եւ արեւմտեան նահանգներէն շրջապատուած էր Պարսից թագաւորութիւնը, որ թէեւ պարսիկ բնիկ դաւառներու՝ հին Պարսք եւ Կրման սատրապութիւններու մէջ, Տիգրոնէ կերպապէս կախում ունէր, սակայն իրականին կատարեալ անկախութիւն մը կը վայելէր (Գուտալիդ, 156): Այսպէս ամբողջ ա-

<sup>28</sup> GGM. I, 244 յլ.:  
<sup>29</sup> Պլին. Դ. 141. Կ. Միւլէր հետեւելով Բեռնարդիէ հոս կրաւամբ Դիոնիսիոս անուան տեղ Իսիդոր նշանակած է (էջ 2Ա յլ.):  
<sup>30</sup> Ասիկէ ծագում առած հնդկա-պարթեւական պետութեան մասին տես վարը:

րեւելեան Իրանը, բաց առնելով միայն բաղարիական-զոգտանեան երկրամասերը, որոնք Թոխարացիներու ձեռքն էին, հարստութեան վերջին շրջանին, զարձեւալ արքայից արքային կը պատկանէր:

Իսիդորի գործունէութիւնը կ'իյնայ այն արիւնալի խառնաշփոթութիւններու սկիզբը, որոնք պատճառ եղան պետութեան քայքայման եւ նոր հարստութեան մը տակ անոր վերականգնումին: Մաննէսի տնէն վերջին երկու արշակունիները՝ Հրահատ Դ. եւ անոր կրտսերազոյն որդին Հրահատակէս՝ նոյն իսկ արեւելքի համբերող ժողովուրդներու համար անտանելի էին: Անոնց բռնակարական կամայականութիւններու դէմ ծագած դժգոհութիւնը՝ պետութիւնը ծանր կռիւներու մէջ խորատուեց, որոնք 5 մինչեւ 15 տարիներու միջոցին Իրանի պատմութիւնն անթափանցելի մշուշով մը կը պատեն: Հազիւ այս մթութիւնը կը փարատի, պետութեան ղեկը կը տաննէք նոր արքայից արքայի մը՝ Արտաւանի ձեռքը, որ Հրահատ Դ.ի Հոռմէացիներէ գահ բարձրացած որդին կը վտարէ: Հոռմի գահաժառանգը՝ Գերմանիկոս 18 տարեոյն արեւելքի նոր տիրոջ հետ համաձայնութիւն մը կը կնքէ, որով Հոռմի եւ Տիգրոնի յարաբերութիւնները տասնեակ մը տարիներու համար խաղաղ ընթացք մը կը ստանան (Տակ. Տ. Բ. 1 յլ.):

Արտաւան միայն մօք կողմանէ արշակունի էր, իսկ հօր կողմանէ ոչ համածին եւ մեծցած էր Դակերու մօտ (Տակ. Տ. 2, 41, 42, Բ. 3): Վրկանի եւ Կրմանի ազնուականներու մէջ ունէր իր խմբակը, որ անյեղլի հաւատարմութեամբ իրեն կուսակից էր (Տակ. Տ. 2, 36): Տակիտոսի վկայութեամբ (Բ, 3) իր դակեան յարաբերութիւններու շնորհիւ 15ին գահ բարձրացաւ, իսկ 36ին իր Վրկան-կրմանեան հաւատարմիները՝ գահի կորուստէն յետոյ իր փախուստի ճանապարհը հարթեցին (Տակ. Տ. 2, 44): Իւր որդիները Վարդան եւ Գոտարզ ալ իրենց ուժերով հիւսիսարեւելեան նահանգներու մէջ արմատացած էին: Գոտարզ անոնց օգնութեամբ Վարդանի նորածագ ապստամբութեան դէմ յաջողութեամբ կը մարանչի եւ երբ վերջապէս կը ստիպուի արքայից արքայի թագը թողուլ իր եղբոր, կը պահէ իրեն Վրկանի իշխանու-

թիւնը (Տակ. Տ. ԺԱ, 8, 9)<sup>31</sup>: Իսկ Վարդան համանման դէպքեր մը պարագային կ'պատանի հեռաւոր արեւելք՝ տոխարեան Բակտրիայի սահմաններու մօտ (անդ, ԺԱ, 8): Ըստ այսմ Արտաւանի կառավարութեան սկզբէն մինչեւ Գոտարզի մահը՝ կէս դարու միջոցին, արքունի ուժին ծանրակէտը Վրկանեան երկիրներու եւ անոնց սկիւթական անդրաշխարհին մէջ հաստատուած էր: Այս յարաբերութիւններէն՝ Արտաւանի համար կարելի է այն եզրակացութեան գալ թէ սա զաւակն էր արշակունի մօր մը եւ սկիւթական իշխանի մը, որ հին պետութեան քայքայումին՝ նախ Վրկաններու երկրին եւ ապա արեւմուտքին ալ տիրացած է:

Այս ըմբռման դէմ Յ. Մարքուարտ (ZDMG, ԾԸ, 640 յլ.) հետեւեալ նոր կարծիքը կը դնէ. Արտաւան Ատրպատականի մարական արքունի տնէն կը սերի եւ յանձին Արտաւանի այս ցեղը պարթեւական գահին տիրացած է: Իր յենակէտն է Քէյ-Սոսրովի իրանեան ղիւցազնավէպը, որու համաձայն սա Ատրպատականի արքային որդին էր եւ դեռ մանուկ հասակին անդրկասպեան անապատի թուրքմէններու քով կը փախցուի, իսկ իր նախահայրերու գահին վրայ հաստատուելը կը պարտի Սորասանի Գոտարզ թագաւորին (անդ, 642): Դարձեալ Ստրաբոն (ԺԱ. 523) կը պատմէ, թէ Ատրպատականի արքունի ցեղը, Մոսիքի, Հայաստանի եւ Պարթեւներու թագաւորներու հետ ազգակցական կապեր հաստատելէ ետքը դեռ կը տեւէր: Եւ վերջապէս Յովսեփոս (Հն. ԺԸ, 48 յլ.) կ'աւանդէ, թէ Արտաւան Մարաստանի թագաւոր էր, երբ մեծ արքային գահը հրաւիրուեցաւ:

Սակայն առաջ բերուած փաստերը այդ կառուցուածքին չեն տուար: Իրանեան ղիւցազնավէպը շատ մը ուրիշ գծերու կից Վարդի կեանքէն գծեր ալ Քէյ-Սոսրովի պատկերին մէջ ներմուծած է (Մարքուարտ, Անդ, 642) եւ որովհետեւ Վարդը Ատրպատականի թագաւորին որդին էր, շատ հաւանական է, որ աւանդավէպի ղիւցազնին երիտասարդութեան պատմութիւնն՝ առաջին դարու երկու-

<sup>31</sup> Գոտարզ, ինչպէս իր զբաղմունքն, որոնց ընթերցումը ի սկզբան սխալ կարգացուած էր, կ'պացուցանեն, Արտաւանի հարազատ որդին էր. տես Steinh PWRE, VII, 1676, յօդ. Gotarzes րոտ Mroth, Num. Chron., 1900, 93 յլ., Catalogue XLV, 2: